

Մետա-բարոյագիտութեան ոչ-ճանաչողական դիրքաւորման կը պատկանի՝ *յուզապաշտութիւնը* (Emotivism), որ կը կրէ վերլուծական փիլիսոփայութեան (Analytic Philosophy) եւ դրապաշտութեան (Positivism) զոյգ ազդեցութիւնները:

Յուզապաշտութեան մէջ, բարոյական արտայայտութիւնները, ոչ միայն նպատակային արժէքներ կը ներկայացնեն, այլ՝ նաեւ՝ զգացումներ, որոնց ճամբով կարելի է ուրիշներու վրայ ազդել կամ զանոնք համոզել:

Բրիտանացի բարոյագէտ-փիլիսոփայ **Այէր** (Alfred Jules Ayer, 1910 – 1989 թ.) կը բերէ հետեւեալ օրինակը.- «դուն անարդարութիւն ըրիր, երբ դրամ գողցար» եւ «դուն դրամ գողցար» արտայայտութիւններու տարբերութիւնը ինծի համար այն է, որ առաջինին մէջ ես կը յայտնեմ նաեւ իմ վրդովումը եւ կը պախարակեմ խնդրոյ առարկայ անձը: Ես կրնամ սակայն երկրորդ արտայայտութիւնն ալ այնպիսի՝ հնչականութեամբ ու շեշտաւորումով արտասանել, որ նոյն պախարակելի իմաստը տայ:

Անշուշտ կարելի է քննադատել յուզապաշտութիւնը, որ ուրիշներ համոզելու համար, զգացումներու իւրայատուկ ճամբով անոնց վրայ կ'ազդէ: Այս պարագային, յուզապաշտութիւնը, իրականութեան մէջ, նախ տուեալ արտայայտութեան սխալականութեան, *ճիշդ* կամ *սխալ* ըլլալուն վրայ բան չաւելցներ ապա օգտագործուած զգացական արտայայտութիւնը, ինքնին, պէտք է բարոյական դատողութեան ենթարկուի:

➤ **Ճանաչողականութիւն**

Ճանաչողականութեան համաձայն, բարոյական համոզումներն ու բարոյական իրողութիւնները ճանաչելի են եւ կարելի է ճշդել՝ բարոյական դատողութիւններու սխալականութիւնը, անոնց *ճիշդ* կամ *սխալ* ըլլալը:

Յիշեալ բարոյական դատողութիւններու սխալականութիւնը կարելի է ճշդել, նկատի ունենալով հետեւեալ երկու ուղղութիւնները, որոնց մասին Էաբանական ոլորտի մէջ խօսուեցաւ արդէն.-

- *Բարոյական իրապաշտութիւն եւ*
- *Բարոյական հակա-իրապաշտութիւն:*



Ստորեւ պիտի ներկայացուի՝ մետա-բարոյագիտութեան հիմնական դիրքաւորումներու կառուցային աղիւսակ մը, ուր ցուցակագրուած են վերոյիշեալ մանրամասնութիւնները: